

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ ՆԻՑՑԱ

Մայիսի 14-ին, երկուշաբթի:

Այսօր, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը հովվապետական այցելությամբ ժամանեց Նիցցա: Օդանավակայանում Հայոց Հայրապետը ջերմորեն դիմավորվեց Նիցցայի հայոց համայնքի ներկայացուցիչների կողմից՝ գլխավորությամբ տեղի հոգևոր հովիվ և Մայր Աթոռի միաբան տ. Տարոն վարդապետ Ծերեճյանի:

Հայոց Հայրապետին այստեղ ողջունելու և բարի գալուստ մաղթելու էին եկել նաև Ալպ Մարիտիմ նահանգի փոխնահանգապետ պրն. Ֆիլիպ Մելկիորը, Նիցցայի քաղաքագլուխ պրն. Ժակ Մեդսենը, Նիցցայի շրջանի երեսփոխան պրն. Ֆերնան Իկարը, Նիցցայի կաթոլիկ եպիսկոպոսի փոխանորդ մոնսենյոր Բելքսը, Մոնակոյի եպիսկոպոս մոնսենյոր Ալբեն և այլ պաշտոնական անձնավորություններ: Դիմավորողների թվում էին նաև Նիցցայի հայ եկեղեցու կրոնական ընկերակցության անդամները՝ գլխավորությամբ նախագահուհի տիկին Թագուհի Ճեվիզյանի: Ներկա էին նաև տեր և տիկին Հրանտ Նասիպյանը, տեր և տիկին Մուշեղ Ծիերճյանը, տեր և տիկին Սարգիս Քյուրքճյանը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը առաջնորդվեց Նիցցայի հայոց ս. Աստվածածին եկեղեցին, ուր մուտք գործեց «Հրաշափառ»-ով:

Հանուն Նիցցայի հայ համայնքի, Հայոց Հայրապետի ժամանումը ողջունեց և բարի գալուստ մաղթեց տ. Տարոն վարդապետ Ծերեճյանը և սիրով հրավիրեց Հայոց Հայրապետին Իր օրհնության խոսքը և պատգամը տալու Նիցցայի հայ հավատացյալներին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՆԻՑՑԱՅԻ ՀԱՅՈՑ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Աստուծո ողորմությամբ անավասիկ երկրորդ անգամ է, որ կայցելենք Նիս քաղաքը Միջերկրական գեղածիծաղ ափերուն վրա փռված: Եվ այս բնության գեղեցկության մեջ, մխիթարական է հաստատել, որ կա նաև այս աղոթքի տունը հայկական: Այս շինությունը Նիսի մյուս պալատանման շինություններու կողքին համեստ է, բայց այդ համեստության մեջ ոգեկան գեղեցկությունն է, զոր Մենք կփնտրենք, և այդ ոգեկան գեղեցկությունն է, որ ամեն մեկ հայ եկեղեցվո սեղաններեն կճառագայթե և կլուսավորե մեր ժողովուրդի հոգիները: Անավասիկ այս զգացումով է, որ Մենք այս պա-

հուն համակված ենք, մուտք գործելով այս փոքրիկ աղոթքի տունեն ներս: Եվ այս զգացումը առավել հոգեկան լայն հորիզոն կստանա Մեր գիտակցության մեջ, տեսնելով ձեր ներկայությունը այստեղ:

Եկեղեցին ոչ միայն նյութական շենքն է, այլ առավելապես այդ շենքի մեջ աղոթողները, համայնքի անդամները, հավատացյալները, որոնք ժամանակ առ ժամանակ, գոնե շաբաթը անգամ մը, կիրակի օրերը կհավաքվին այստեղ, որպեսզի հաղորդակից դառնան աստվածային ճշմարտություններու և հաղորդակցության մեջ մտնեն իրենց հայրերու, նախահայրերու ոգիներուն հետ: Հայ եկեղեցին ոչ միայն մեր այսօրվան ապրողներուս եկեղեցին է, այլ անոր մեջ են նաև մեր բոլոր նախնիքները: Հայաստանյայց եկեղեցին՝ վերջին մոտ քսան դարերու ընթացքին ապրող և մեր ազգային պատմությունը կերտող ժողովուրդի ամբողջությունը կկազմե: Քրիստոնեական բացատրությամբ՝ այսօրվան ապրողները կկազմեն կենդանի եկեղեցին, իսկ հավիտենական կյանքին ժառանգորդ եղողները, այսինքն մեր նախնիքները բոլորը միասին կկազմեն հաղթական եկեղեցին:

Անհավասիկ Մենք այդ հաղթական եկեղեցիին կակնարկենք, հիշեցնելու համար ձեզի բոլորիդ, որ դուք ոչ միայն անդամներն եք այսօրվա Նիսի հայ եկեղեցական համայնքին, այլ նաև ոգեկան իմաստով մասը կկազմեք մեր ամբողջ հավատացյալ ժողովուրդին, եկեղեցիին, որ բազում դարերու ընթացքին ապրած է, կապրի այսօր, և Մենք կհավատանք, որ հավիտյան պիտի ապրի այս աշխարհի վրա: Մենք մոտ հազար յոթը հարյուր տարիներ շարունակ, իբրև եկեղեցի, իբրև Աստուծո ժողովուրդ, կարողացեր ենք ապրիլ, զարգանալ, ստեղծագործել ոչ միայն Հայաստանի հողի վրա, այլ նաև ի սփյուռս աշխարհի: Հայերը, տակավին 5-րդ դարեն սկսյալ, միշտ սփյուռք ունեցած են, գաղութներ, համայնքներ տարբեր երկիրներու մեջ, թե՛ Մերձավոր Արևելքի, թե՛ Արևելյան Եվրոպայի՝ Բալկաններու, Լեհաստանի, Ռումանիո, Հունգարիո, Բուլկարիո և այլ շրջաններու մեջ: Այսպիսով, հարյուրավոր տարիներ մեր եկեղեցին պատմական դեր կատարած է թե՛ մեր ժողովուրդի և թե՛ օտար ժողովուրդներու կյանքին մեջ: Անհավասիկ այս գիտակցությունը Մենք կուզենք որ արթննա այսօր ապրող մեր ժողովուրդի հոգիին մեջ:

Ճիշտ է, մենք ծանր հարվածներ կրեցինք, մանավանդ առաջին համաշխարհային պատերազմին, երբ մեր ժողովուրդի գրեթե կեսը զոհվեցավ: Բայց, փառք Աստուծո, որ հրաշքի համազոր իրադարձություններու հետևանքով մեր ժողովուրդը, մեր եկեղեցին նորեն կյանքի ճամփուն վրա եկան, կազմակերպվեցավ հայկական պետությունը, որ ահա վաթսուն տարիներե ի վեր կապրի և կշարունակե իր հաղթական երթը նյութական վերաշինության և ազգային մշակույթի զարգացման ճամբով արդի Հայաստանի մեջ, ուր երեք միլիոն հայեր կապրին, ու նաև արտասահմանի մեջ, ուր մոտավորապես նույնքան հայեր կան: Եթե 1915-ի ցեղասպանությունը չըլլար, մենք այսօր առնվազն տասը միլիոնի հասնող ժողովուրդ պիտի ըլլայինք:

Այսօր հայ ժողովուրդը, հայ եկեղեցին իր ճակատագիրը կդիմավորե լավատեսությամբ, հաղթողի գիտակցությամբ, վերածնած ժողովուրդի մը և եկեղեցիի մը գիտակցությամբ:

Անհավասիկ այս զգացումներով Մենք կուգանք Մայր Աթոռ ս. Էջմիածնեն, մեր մայր երկրեն՝ բերելու համար ամենուդ քրիստոնեական սիրո, հայրապետական սիրո ողջույն և օրհնություն, Աստուծո օրհնությունը ամենայն հայոց Մայր Աթոռ ս. Էջմիածնեն, որ մոտ տասնչորք դարերե ի վեր տևող-

պես և անվազելի կերպով կբաշխվի մեր ազգի բոլոր զավակներուն, ուր ալ գտնվին անոնք աշխարհի ճամփաներուն վրա: Մենք շատ ուրախ ենք, որ ձեզի հանդիպեցանք այսօր, շատ դեմքեր Մեզի համար մտերիմ են, կարոտով կհիշենք ձեզ բոլորդ Մեր առաջին այցելութենեն, 1970-ին: Հետևաբար ինչքան հուզիչ է Մեզի համար հանդիպիլ ձեզի:

Մենք այսօր կհանդիպինք նաև ձեր ժրաջան հոգևոր հովիվին՝ տ. Տարոն ծայրագույն վարդապետին: Մենք գինք մոտեն կճանչնանք: Ան ավարտած է մեր ճեմարանը, եղած է Մեր աշակերտը: Եվ ահա այժմ կհանդիպինք իրեն իր հոգևոր ծառայության ճամփուն վրա, և ուրախ ենք, որ իր պարտքը լիուլի կկատարե ամենայն բարեխղճությամբ ու նվիրումով և արժանի է թե՛ ձեր և թե՛ Մեր գնահատանքին և օրհնության:

Մեր հայրական սերը և հայրապետական օրհնությունը ձեզի բոլորիդ, ձեր հոգևոր հովիվին, եկեղեցական վարչության հավատավոր անդամներուն, տիկնանց և երիտասարդական ձեր միություններուն, որ բոլորդ ձեռք-ձեռքի տված, շեն ու պայծառ կպահպանեք ձեր սուրբ եկեղեցին:

Թող Աստված հավետ անսասան պահե ձեր այս աղոթքի տունը և ձեզ միշտ մխիթարե սուրբ Հոգվով:

Եկեղեցական արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը առաջնորդվեց «Նեգրեսկո» հյուրանոց:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Նույն օրը, ժամը 13-ին, Վեհափառ Հայրապետը մասնավոր հանդիպում ունեցավ Սեն-Ռաֆայել քաղաքի հայկական ծերանոցի պատասխանատուների հետ, որոնք մասնավորաբար եկել էին Նիցցա՝ ողջունելու և բարի գալուստ մաղթելու Հայոց Հայրապետին:

Սույն հաստատության տնօրենուհին է տիկին Ադել Կարապետյանը: Հանուն վերոհիշյալ հաստատության և պատասխանատուների, բարիգալստյան հետևյալ խոսքն ասաց օրիորդ Լուիզ Փափազյանը.

«Վեհափառ Տեր, այստեղ հավաքված մի բուռ հայի բեկորներ՝ անցած տառապանքի ճամփաներով, բայց հայի գրանիտե հավատքով, աղոթքի և հույսի ճամփով վերապրողներ, կողջունենք Ձեզ բարի գալուստ մաղթելով:

Յուրաքանչյուրը հուզմունքով է ապրում իր կյանքի ամենաերջանիկ բացառիկ այս պահը հանդիսացող ներկան, վայելելով Ձերդ Սրբության շնորհաբեր ներկայությունը:

Օրհնաբեր սույն առիթը, որ շնորհվեց ՀՕՄ-ի բնակիչներին, որպես անջնջելի հիշատակի օր, պարտական ենք Ձերդ Սրբության բարեհաճ կարգադրությանը, որ հակառակ իր ժամանակի սղությանը, չցանկացավ անտեսել մեր խնդրանքը, ընդառաջելով մեր բուռն ցանկությանը, որի միջնորդ հանդիսացող ՀՕՄ-ի եռանդուն և հարգելի տնօրենուհի տիկին Կարապետյանը ջանք չխնայեց հաջողեցնելու սույն մի քանի պահերը կորզելու Ձերդ Սրբության թանկագին ժամանակից:

Ապահովաբար նա մեկ շաբաթ անքուն գիշերներ անցկացրեց՝ մի հնար, մի ճար գտնելու իր խնամքին հանձնված պատասխանատուներին ուրախացնելու համար: Եվ երեկ կեսօրին, հաղթական ժպիտը դեմքին, գոհունակությամբ հայտարարեց սույն հաճույքը՝ հանդիպման կարգադրությունը:

Առ այս, Վեհափառ Տեր, բոլորս կաղոթենք Ձեր թանկագին առողջու-

թյան, արևշատության և մեր մաղթանքները կներկայացնենք Ձեր առաքելության լրիվ հաջողության համար»:

Հայոց Հայրապետը, խորապես հուզված այս հանդիպումից, օրհնեց Սեն-Ռաֆայելի հայկական ծերանոցի ղեկավարության ժրաջան և սրտացավ անդամներին, ինչպես նաև այստեղ իրենց կյանքի վերջին օրերը խաղաղությամբ անցկացնող հայ պապիկներին ու մամիկներին ու բաշխեց Իր օրհնությունները: Ի հիշատակ Իր այցելության Նորին Սրբությունը ս. Էջմիածնից բերված խաչիկներ բաժանեց բոլոր ներկաներին:

Ժամը 14-ին Վեհափառ Հայրապետը հյուրանոցում ընդունեց այցելությունը Նիցցայի հայոց ս. Աստվածածին եկեղեցու թաղականության անդամների և զրույց ունեցավ նրանց հետ:

Նույն օրը, ավելի ուշ, Հայոց Հայրապետը ընդունեց նաև այցելությունը Նիցցայի և Կանի հայ Տիկնանց միության ներկայացուցիչների՝ գլխավորությամբ Նիցցայի միության նախագահուհի տիկին Ատրինե Փափազյանի և Կանի միության նախագահուհի տիկին Ժուլիետ Մելիքյանի: Վերոհիշյալ Տիկնանց միությունները զբաղվում են կրթական գործերով, միօրյա հայկական դպրոցների կազմակերպումով՝ անմիջական ղեկավարության ներքո տ. Տարոն ծայրագույն վարդապետի:

ՀՐԱԺԵՇՏԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Ժամը 15-ին Նիցցայի հայ համայնքը հրաժեշտի ճաշկերույթով պատվեց Հայոց Հայրապետին «Նեգրեսկո» հյուրանոցում: Ներկա էին ավելի քան 100 հրավիրյալներ:

Ճաշկերույթի ընթացքում, հանուն Նիցցայի հայոց կրոնական ընկերակցության, վարչության քարտուղար պրն. Ժիրայր Միրիճանը ողջունեց և բարի գալուստ մաղթեց Հայոց Հայրապետին:

Ընդունելության ժամանակ խոսք առավ նաև Հայոց Հայրապետը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՆԻՑՑԱՅՈՒՄ ՀՐԱԺԵՇՏԻ ՃԱՇԿԵՐՈՒՅԹԻՆ

Արդեն տասը օր է Ֆրանսա կգտնվինք:

Այժմ եկանք Նիս, Մայր Աթոռ ս. Էջմիածնեն Աստուծո օրհնությունը բերելու ամենքիդ և ողջույնները մեր վերածնված Մայր Հայաստանի, հավիտենական Հայաստանի: Հոգեկան մխիթարություն է հայրապետի մը համար իր ուղևորություններու ճանապարհին վրա տեսնել և հաստատել եկեղեցական կյանքի հետզհետե առավել լավ կազմակերպումը ամեն տեղ:

Քիչ առաջ խոսողները ակնարկեր ըրին դժվարություններու, որոնց կբախի հայը արտասահմանի մեջ: Մենք ալ ձեզի պես արտասահմանցի հայ ենք: Մեր երիտասարդության շրջանին Ռումանիո մեջ նույն մտահոգությունները կապրեինք, նույն դժվարությունները, նույն պայքարները կմղեինք, նույն նպատակով, պահպանելու համար մեր հայկական ինքնությունը մեր եկեղեցիներով, մեր մշակութային հաստատություններով, ազգային կազմակերպություններով: Այսօր ալ նույնն է կացությունը ամբողջ սփյուռքի տարածքի վրա և առավել կամ նվազ չափով սփյուռքի տարբեր կեդրոններու մեջ, նայած տեղական պայմաններուն, բոլոր հայերը իրենց առավելագույնը կջանան ի գործ դնել: Հետևաբար Մեր առաջին մաղթանքը և

ցանկությունն է, որ ավելին կատարվի և մեր բոլորիս իղձերը իրականանան գոնե բավարար չափով:

Եվ երբեք պետք չէ մոռնանք, որ արտասահմանի հայության կյանքի խարիսխը՝ Հայաստանյայց եկեղեցին է: Հայաստանյայց եկեղեցիով է, որ հաչս օրենքի, հաչս պետությունների, դուք հայ եք: Այս շատ կարևոր պարագա մըն է: Այսօր մեր Եկեղեցին, իր գլուխը ունենալով Մայր Աթոռ ս. Էջմիածինը, ունենալով իր կողքին մյուս նվիրապետական Աթոռները, իր պատմական առաքելությունը կշարունակե մեր ժողովուրդի կյանքին մեջ թե՛ ի Հայաստան և թե՛ ի սփյուռս աշխարհի:

Գիտենք, որ դժվարությունները բազում են, բայց անկարելի չէ հայ մնալ աշխարհի վրա: Հոռետես պետք չէ ըլլալ: Նույնիսկ Մեր անձնական հերքին համոզումն է, որ այս աշխարհի վրա հայ ապրիլը շատ հետաքրքրական է: Եվ եթե դժվարություններու առջև կգտնվինք, այդ ավելի կլարե մեր ուժերը՝ այս կյանքը ապրելու համար ազնիվ պայքարով, այս կյանքը ապրելու համար առավել ստեղծագործորեն: Կխորհինք թե մանավանդ երիտասարդներու հոգիին պետք է խոսին այս մտածումները: Կմաղթենք, որ դուք ձեր երիտասարդներուն հերշնչեք այս ոգին, որպեսզի անոնք ջահակիրները դառնան, այսօր և վաղը, մեր ժողովուրդի ոգեկանության և մեր ժողովուրդի իդեալներու իրականացման:

Կուզենք նաև վկայությունը բերել Մայր երկիր Հայաստանեն, ուր այս ոգին հետզհետե կաճի և կզարգանա, մանավանդ այս վերջին քսան տարիներու ընթացքին:

Այսօր Հայաստանցի ժողովուրդը ոգեկան ամուր չորս խարիսխներ ունի, որոնց վրա կհենվի իր հայկականության գիտակցությունը. նախ՝ հավիտենական Արարատը, երկրորդ՝ ս. Էջմիածինը, ապա Եղեռնի և Սարդարապատի հուշարձանները:

Այս չորս սյուները այսօրվան հայաստանցի հայուն ազգային զգացումի ամրոցներն են: Եվ այս ոգիով է, որ հայաստանցի ժողովուրդը, մեր օրերուն, լարված աշխատանքով ու հավատքով դեպի հայոց ապագան, կվերաշինե, կծաղկեցնե իր նոր հայրենիքը, իր վերածված հայկական պետությունը խաղաղության ու ապահովության պայմաններու մեջ:

Հայրենիքի վերաշինությունն ու ծաղկումը հավատքի և կենդանության աղբյուր է նաև սփյուռքի հայության համար, ձեզի բոլորիդ համար:

Թող Աստված հավետ պահապան և մարտակից մնա մեր վերածնած ժողովուրդին ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի. ամեն: